ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ (ԷԱՃ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք.Երևան,Բագրևանդի 5հասցեում,ստորևներկայացնում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/12» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի արդյունքում 2018թ.-ի դեկտեմբերի 18-ին կնքված N ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/12-2 ծածկագրով պայմանագրում 2019թ.-ի մարտի 18-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսումը:

Փոփոխության նկարագրություն: Նկատի ունենալով, որ հատկացվել են համապատասխան ֆինանսական միջոցներ,կնքվել է համաձայնագիր՝ 2019թ. մասով ապրանքների ձեռք բերման պայմանագիրը ուժի մեջ մտնելու վերաբերյալ: **Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի №1հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 43475000 (քառասուներեք միլիոն չորս հարյուր յոթանասունհինգ հազար)ՀՀ դրամ:Ապրանքի գինը ներառում է հարկերը,տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:**

Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3կետին համապատասխան,բայց ոչ ուշ քան 20.12.2019թ.:

Փոփոխության հիմնավորում: Սույն փոփոխությունն կատարվում է հիմք ընդունելով Պայմանագրի 8.15կետը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության առաջատար մասնագետ Գ.Վարդանյանին:

Հեռախոս՝ 010-29-44-18:

Էլ.փոստ՝ g.vardanyan@mil.am:

Պատվիրատու՝ՀՀ պաշտպանության նախարարությունն:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/12-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 18 .03.2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և Ա/Ձ Կարեն Վարդանի Հարությունյանը, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 18.12.2018թ. կնքված № ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/12-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 43475000 (քառասուներեք միլիոն չորս հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 20.12.2019թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1 և № 2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 02522157 ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Ա/Ձ Կարեն Վարդանի Հարությունյան ք.Երևան, ք. Երևան, Նոր-Նորք, Մոլդովական փ. 2/21 Ինեկոբանկ ՓԲԸ 2052132168851001 ՀՎՀՀ 80291894 տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Կ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
№ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/12-2 N 1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակը	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը 2019թ.-ին ըստ ամիսների								
						ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր, ոչ ուշ քան 20.12.19թ
1	Խնձոր/խնձոր/	կգ	92500	234	21645000	80	80	80	80	22000	22000	22000	24580	1600
2	Խնձոր/խնձոր/	կգ	92500	234	21645000	80	80	80	80	22000	22000	22000	24580	1600

Ծանոթություն՝ մատակարարումը ք.Երևան, Սարմի 103 հասցեում:

Հավելված N 2
№ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/12-2 N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկան	CPV-ի կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 20.12.2019թ*								
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Խնձոր/խնձոր/	03222128/526	18720	37440	56160	74880	5222880	10370880	15518880	21270600	21645000
2	Խնձոր/խնձոր/	03222128/527	18720	37440	56160	74880	5222880	10370880	15518880	21270600	21645000

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ Կարեն Վարդանի Հարությունյան
ք.Երևան, ք. Երևան, Նոր-Նորք, Մոլդովական փ. 2/21
Ինեկոբանկ ՓԲԸ
2052132168851001
ՀՎՀՀ 80291894
տնօրեն

Կ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ